ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

13 դեկտեմբերի 2012թ. թիվ 640

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ
ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.15 կետի «ժա» ենթակետով, համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզային գործակալության համատեղ աշխատանքային ծրագրի, հիմք ընդունելով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Ա.Գևորգյանի 11.12.2012թ. թիվ 01/15/6523-12 հանձնարարականը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2013թ. հունվարի 1-17-ը անցկացնել անասնագլխաքանակի համատարած հաշվառում:

2. Հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում և պատշաճ մակարդակով իրականացնելու համար առաջարկել՝

1) Լոռու մարզի բոլոր համայնքների ղեկավարներին՝

Մինչև 2012թ. դեկտեմբերի 28-ը կազմել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող և անցկացնող համատեղ հանձնաժողովներ՝ դրանց կազմում ընդգրկելով նաև տվյալ համայնքը սպասարկող անասնաբույժին:

Անասնագլխաքանակի հաշվառման արդյունքները մինչև 2013թ. հունվարի 20-ը ներկայացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Լոռու մարզային գործակալություն:

2) ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Լոռու մարզային կենտրոնի պետ Գ.Դանիելյանին՝

Մարզի համայնքներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Լոռու մարզային կենտրոնի անասնաբուժական ծառայության անձնակազմի միջոցով վերահսկել անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2012թ. դեկտեմբերի 13
ք.Վանաձոր